# ԽՈՐԵՆ Ա ՄՈՒՐԱԴԲԵԿՅԱՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ԿՈՆԴԱԿԸ

## ԽՈՐԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

Շնորհազարդ Տ. Սահակ Բ. եւ Աթոռակից Տ. Բաբգէն Ա. Կաթողիկոսաց Տանն Կիլիկիոյ, Ամենապատիւ Պատրիարքի Առաքելական Աթոռոյն Ս. Յակոբեանց Երուսաղէմի Տ. Թորգոմ Արքեպիսկոպոսի, Ամենապատիւ Պատրիարքի Հայոց Կ. Պոլսոյ Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոսի, Գերապատիւ Առաջնորդաց համօրէն թեմօրէից Մերոց, արքեպիսկոպոսաց, եպիսկոպոսաց, վարդապետաց, քահանայից եւ ամենայն պաշտօնէից Ս. Եկեղեցւոյս, Ընդհանուր Բարեգործական Միութեան եւ ամենայն ազգային ասպուածահաճոյ հաստատութեանց եւ վարչութեանց նոցին եւ համօրէն հաւատացեալ հօտին Հայաստանեայցս Եկեղեցւոյ, որ ի Հայաստան աշխարհի, ի Հանրապետութիւնս Խորհրդային Միութեան եւ յամենայն պետութիւնս ի սփիւռս աշխարհի, ողջոյն Հայրապետական եւ օրհնութիւն ի Միածնաէջ Տաճարէս Ս. Էջմիածնի:

Ապաքէն յայտ է ամենեցուն եղբարց Մերոց սիրելեաց եւ հոգեւոր որդւոց ընտրութիւն Մեր յԱթոռ Կաթողիկոսութեան Ամենայն Հայոց ի ձեռն Համազգային-Եկեղեցական ժողովոյ, գումարելոյ ի փասէն ցփասնեւերեքն նոյեմբերի 1932 ամի: Յուշ ածեալ զպատմութիւն ժողովոց եւ զընտրութիւնս կաթողիկոսաց մերոց, կոչեմք զսա եզական՝ ոչ միայն ազատ գործառնութեամբ իւրով, առանց արտաքին ներգործութեանց եւ թելադրութեանց ի վճիռս, այլ եւ նորոգութեամբ հնաւանդ սովորութեանն՝ ըստ որում Մերս Եկեղեցւոյ, որ հայի յընտրութիւն միոյ եւեթ թեկնածուի կաթողիկոսի եւ յօծումն նորա անմիջական, առանց միջամտութեան կամ հաստատութեան մարմնաւոր իշխանութեանն: Ընտրութիւն Մեր կատարեցաւ յերկոտասաներորդ աւուր նոյեմբերի, իսկ զհայրապետական օծումն ընկալաք զկնի աւուր միոյ, ըստ միահամուռ ցանկութեան ամենայն ժողովականաց:

Զայս ամենայն եւ զյաջողութիւն ելից ժողովոյն պարտիմք բարեհաճութեան Խորհրդային Կառավարութեան Հայաստանի:

Յայտ առնելով զայսպիսի բարեբաստիկ նշանաց սկզբնաւորութեան Մերոյս Հայրապետութեան, սակայն ոչ մոռանամ զմտաւ ածել զդժուարին հանգամանս ժամանակի եւ բերմանց, յորում վիճակեցաւ Մեզ բազմիլ յԱթոռ առաքելաշնորհ Լուսաւորչին Տանս Թորգոմեան եւ սրբազան յաջորդաց նորին, կենդանի նախապակութեամբ եւ բազմերախտ գործովք եւ արդեամբ որոց՝ յընթացս բազմահոլով դարուց, եհաս Մեզ նաւ Եկեղեցւոյ Մերոյ Սրբոյ անվտանգ յամենայն խութից եւ անփորձ ի փոթորկալից ալեաց: Յաջողեսցի՞ եւ Մեզ կապարել զնոյն պարտիս, զեղեալն ի վերայ Մեր թելադրութեամբն Աստուծոյ եւ ընտրութեամբ ժողովականաց համայն հաւատացեալ հօտին Հայաստանեայցս Եկեղեցւոյ:

Զի տեսանեմք զհաւատացեալ ժողովուրդն Մեր ցրուեալ ի սփիւռս աշխարհի, զրկեալ ի հայրենի տանէ եւ յընչից, թափառական յոլորտս օտար եւ հեռաւոր աշխարհաց, ծիւրեալ եւ պասքեալ յերեսաց աղքատութեան եւ պանդխտութեան, ենթակայ այլասերման, տապանեալ ի հաւատս եւ բեկեալ ի յուսոյ: Յաջողեսցի՞ եւ Մեզ մխիթարել զսգաւորս, բժշկել զհոգւով հիւանդացեալս, կանգնել զգլորեալս եւ հաստատել ի հաւատ եւ ի յոյս, ժողովել ի մի զցրուեալսն ի հոգեւոր հայրենիս, ի փարախ Լուսաւորչին Մերոյ Հայաստանեայց: Յաջողեսցի՞ Մեզ ի կատար ածել զորոշումն Համազգային-Եկեղեցական ժողովոյն, կազմել զնոր սահմանադրութիւն, բղխեալ ի նուիրական եւ ի պատմական աւանդութեանց Եկեղեցւոյ Մերոյ, ի նկատ առեալ եւ զբազմատեսակ իրաւակարգ ժողովրդոց, յորոց միջի բնակեալ կան հատուածք հաւատացելոց Մերոց, բարեկարգել եւ նորոգել զհնացեալ սովորութիւնս եւ կարգս, որք կարօտին սրբագրութեան ըստ պահանջից եւ կարեաց նորոյ ժամանակի ի սահմանս իմաստուն խոհականութեան եւ զգուշաւորութեան, բարւոքել զնիւթական ծանր վիճակ Աթոռոյս ի պահպանութիւն եւ ի յարատեւութիւն միաբանական ուխտիս եւ դաստիարակել զմանկունս Եկեղեցւոյ ի սպասաւորութիւն եւ ի կենդանի քարոզութիւն Բանին կենաց: Յուսալ յուսամ միայն յողորմութիւն եւ յօգնականութիւն Աստուծոյ, եթէ հասանիցէ Մեզ ի թիկունս՝ առ ի զօրացուցանել զփրկարութիւնս ի պահպանութիւն եւ ի կարգաւորութիւն լրութեան Եկեղեցւոյ Մերոյ Սրբոյ:

Յուշ ածելով զդժուարութիւնս ժամանակիս եւ հանգամանաց, սակայն ոչ դանդաղիմ զոհանալ զԱստուծոյ, զի չեմ միայնակ ի կրել զծանր լուծ պարտաւորութեանցս ի կառավարութեան Սրբոյ Եկեղեցւոյ եւ համօրէն հաւատացեալ հօտին, զի ունիմք ընդ Մեզ զՏէր ՍԱՀԱԿ Կաթողիկոս Տանն Կիլիկիոյ, զիմաստութեամբ ծերացեալ եղբայրն Մեր ընդ Աթոռակցաւ իւրով Տեառն ԲԱԲԳԷՆԻ, զՏէր ԹՈՐԳՈՄ Արքեպիսկոպոսն յԱթոռ Պատրիարքութեան Ս. Յակոբեանց Երուսաղէմի, զՏէր ՄԵՍՐՈՊ Արքեպիսկոպոս յԱթոռ Պատրիարքութեան Կ. Պօլսոյ, այլ եւ առ Մեզ ունիմք զանդամս Գերագոյն Հոգեւոր Խորհրդոյ եւ զմիաբանական ուխտ Ս. Աթոռոյս, զամենայն Առաջնորդս թեմօրէից Մերոց, զազգային-եկեղեցական վարչութիւնս եւ զխորհուրդս, որք միացեալ ի սիրտ եւ ի հոգի սիրովն Քրիստոսի եւ Եկեղեցւոյ Մերոյ, օգնական լիցին ի կատարման պարտեացս ի պահպանութիւն եւ ի պայծառութիւն Մօրս ընդհանրականի եւ հոգեւորի:

Արդ, առ Ձեզ են բանք իմ, Շնորհազարդ Տ. ՍԱՀԱԿ Կաթողիկոս Տանն Կիլիկիոյ եւ Աթոռակից Տ. ԲԱԲԳԷՆ, ողջունեմ զՁեզ սիրով եղբայրութեան, որպէս զհոգեւոր եւ զսիրելի հարազատս Մեր, չեն ինչ թեթեւ եւ վիճակեալ Ձեզ պարտիք առ ի հովուել եւ ի մի ժողովել զհաւատացեալ Ձեզ հօտ, որ ի հետեւանս դժբաղդ բերմանց, զրկեալ ի հայրենի երկրէն,

նուաղեալ ի սրոյ, ի սովոյ եւ ի համաճարակ հիւանդութեանց, մնացորդիք միայն մակ-նուաղեալ կայ ընդ հովանեաւ հոգեւոր փեսչութեան Ձերոյ, ընդ հիւրընկալ երկնի ազնիւ ժողո-վրդեանն Սուրիոյ: Հաճութեամբ փեղեակ եմք զբազմազան վաստակոց եւ աշխատանաց Ձերոց ի վերակազմութիւն Կաթողիկոսարանիդ, ի բացումն դպրոցաց եւ ի աստուածահա-ճոյ հաստատութեանց առ Ձեզ եւ յամենայն քաղաքս եւ յաւանս, ուր բնակեալ եւ դաղարեալ կան ազգայինք Մեր: Ուրախ եմք յոյժ ընդ վաստակ եւ ընդ յաջողութիւն Ձեր, զոր իմ իսկ սեպհական համարիմ:

Ողջունեմ եւ զՁեզ, եղբայր Մեր՝ Ամենապատիւ Տէր ԹՈՐԳՈՄ Պատրիարք Հայոց Երուսաղէմի՝ միաբանական Ուխտիդ, Աթոռ Պատրիարքութեանդ հանդերձ այլ արբազան տեղեաւքդ պարծանք մեր են, Հայաստանեայցս Եկեղեցւոյ եւ հօտի յաչս ընդհանուր քրիս-տոնէութեան, տեղիք սուրբ զարշապարաց եւ կենդանարար աւետարանական քարոզու-թեան Փրկչին մերոյ, ի պահպանութիւն եւ ի պայծառութիւն որոց տքնիք Դուք եւ միաբանա-կան ուխտ Ս. Յակոբեանց: Հայցելով զխնամս եւ զհովանաւորութիւն Աստուծոյ ի վերայ Ձեր եւ միաբանութեանդ, մաղթեմք եւ ցանկամք, զի Պատրիարքարանդ եւ վանք եղիցին ընդ կրօնականին եւ լուսատու ջահ եկեղեցական-ազգային գիտութեանց, մշակութեան դպրութեան, արուեստի եւ պատմութեան ազգիս, շաղկապ կենդանի ներկայիս ընդ անցե-լոյն, ժառանգաւոր դպրոցդ սերմնարան քրիստոնէական կենդանի քարոզութեան եւ տուն ճշմարիտ դաստիարակութեան եւ լուսաւոր պատրաստութեան ուխտի մանկանց եւ պաշ-տօնէութեան մերս Եկեղեցւոյ: Ուրախ եմք հոգւով, զի ի ժամանակս նախորդիդ, հոգելոյս Տէր ԵՂԻՇԷԻ Պատրիարքի սկզբնաւորեալ, այժմ առաւել եռանդեամբ շարունակէք զգործ յառաջադիմութեան ժառանգաւորաց դպրոցիդ, զվերակազմութիւն տպարանիդ եւ հրա-տարակչական գործոյ, որպէս եւ նիւթական բարեկարգութեան վանուցդ:

Ողջունեմ եւ զՁեզ, եղբայր Մեր Տէր ՄԵՍՐՈՊ Արքեպիսկոպոս՝ Պատրիարք Հայոց Կ. Պոլսոյ, հանդերձ Եպիսկոպոսական եւ քահանայական դասիդ եւ Ազգային-Եկեղեցական վարչութեամբք: Եւ Դուք չէք ազատ ի վշտաց եւ ի նեղութեանց բերմամբ բարձր պաշտօնիդ: Մաղթեմք վասն ձեր ամենեցուն՝ զօրանալ շնորհօք վերին տեսչութեան, որ ղեկավարն է բաղդի եւ կենաց ազգաց եւ ժողովրդոց, զի կարող լինիջիք տանել զլուծ՝ եղեալն ի վերայ Ձեր, մխիթարել զժողովուրդն Մեր, որ ի Կ. Պոլիս եւ յամենայն գաւառս, պահպանելով որ-պէս զթանգագին մասն եւ ժառանգութիւն ընդհանրական Եկեղեցւոյս, հաստատելոյն ձե-ռամբ Լուսաւորչին Հայաստանեայց:

Ընդ հայրական ողջունիս յորդորեմ եւ զՁեզ, զամենայն Առաջնորդս թեմօրէից Մերոց, զդասս եպիսկոպոսաց եւ վարդապետաց, որք ի Հայաստան աշխարհի, ի Խորհրդային Մի-ութեան եւ յարտասահմանի, լինել զգաստ եւ աչալուրջ ի պաշտաման, ժիր ի քարոզու-թեան Բանին կենաց, օղակ կենդանի ընդ մէջ հաւատացեալ ժողովրդոց եւ Հայրապետա-կան Աթոռոյ, զի ամենեքեան Դուք հոգեւոր որդիք էք Մեծի Տանս եւ անդամք միաբանական ուխտիս, որ ի Ս. Էջմիածին: Զգուշացուցանեմք մանաւանդ զԱռաջնորդս արտասահման-եան թեմօրէից, հեռի կալ եւ պահել զհաւատացեալ Ձեր ժողովուրդ ի կուսակցական պայ-քարաց եւ յանախորժութեանց, հայելով միայն ի բարոյական եւ ի կրօնական շինութիւն հօտիդ: Հայրենի երկիրս եւ համայն ազգ ի սփիւռս կարօտին խաղաղութեան առ ի բուժել զընկալեալ վէրս իւրեանց, ուստի եւ պարտիք դուն գործել վտարել ի միջոյ հաւատացելոց

զամենայն ինչ, որ հակառակ կայ խաղաղութեան եւ մի թողուլ զթշնամական արարս ընդդէմ Մայր Հայրենեաց Մերոց՝ Խորհրդային Հայաստանի եւ Կառավարութեան նորին: Յորդորեմք եւ զքահանայս եւ զամենայն պաշտօնեայս ընդ իշխանութեամբ Ձերով, կենցաղավարութեամբ եւ հաւատարմութեամբ առ մայրս մեր Ս. Եկեղեցի, օրինակ հանդիսանալ ամենայն հաւատացելոց վառել զջահ հաւատոյ եւ բարեպաշտութեան ի հոգիս հաւատացելոց: Ողջունեմք եւ օրհնեմք զամենայն Ազգային-Եկեղեցական վարչութիւնս եւ խորհուրդս թեմօրէից եւ եկեղեցեաց, որք աստ ի Միութեանս եւ յարտասահմանեան գաղութս:

Ողջունեմք եւ օրհնեմք յանուն Տեառն զամենայն հաստատութիւնս, որք հային ի պահպանութիւն եկեղեցեաց, դպրոցաց, յօգնութիւն աղքատաց եւ յայլ ատրուածահաճոյ նպատակս, եւ ի գլուխ ամենեցուն զԲարեգործական Ընդհանուր Միութիւն ամենայն մասամբք, որ օգտակար եւ ընդարձակ գործունէութեամբ իւրով գրաւեալ է զսէր եւ զհամակրութիւն համայն Հայոց - սրբելով զարտասուս բազմաց նեղելոց եւ վշտացելոց յերեսաց անոք չքաւորութեան, բանալով դպրոցս եւ արհեստանոցս ի դաստիարակութիւն որբոց եւ աղքատաց: Յորդորեմք զՁեզ ամենեսին, զվարիչս ամենայն բարենպատակ ընկերութեանց եւ հաստատութեանց, իրազեկ պահել զՄեզ յամենայն ձեռնարկութիւնս եւ ի գործառնութիւնս, զի եւ ես ուրախ եղէց ընդ յառաջադիմութիւն եւ ընդ բարեգործութիւն որդւոցս, օրհնելով զանուն Տեառն շնորհաց, որ հաստատեալ է ի հոգիս մարդկան զգութ եւ զսէր եղբայրական:

Հուսկ յետոյ ողջունեմք եւ օրհնեմք զՁեզ, ժողովուրդք Հայոց, որք բնակեալ կայք ի բնիկ հայրենի երկրին մերում եւ ի դրացի պետութիւնս Խորհրդային Միութեան: Ողջունեմք եւ օրհնեմք նաեւ զվտարանդի զաւակունս Մեր, նժդեհեալս յայլ եւ այլ սահմանս եւ ի քաղաքս արտասահմանեան ազգաց: Կենդանութիւն եւ պահպանութիւն հոգեւոր եւ թանգագին ժառանգութեանս, որ է Հայաստանեայց Եկեղեցի, կախեալ կայ ի հաւատոյ, ի սիրոյ եւ ի բարեպաշտական զգացմանց հաւատացելոցդ, զի չիք Եկեղեցի առանց ժողովրդեան, զի նա կեայ եւ մնայ յաւիտեան ի վերայ Վիմին կենդանւոյ, որ է հաւատ քրիստոնէական ի սիրտ հաւատացելոց: Արդ սիրեցէք զմայրս Ձեր հաւատոյ, զՍուրբ Եկեղեցի եւ եղերուք հաւատարիմ որդիք նորայ՝ ուր եւ զտանիցիք: Կատարեցէք զպարտիս Ձեր ծնողական՝ դաստիարակելով զզաւակունս ի հոգի քրիստոնէական, ի սէր մայրենի Եկեղեցւոյ, լեզուի, հայրենեաց եւ սրբազան աւանդութեանց: Ջանացարուք պահել զբարձր անուն եւ զպատիւ ազգի յաչս օտարաց, յորոց միջի բնակեալ կայք, աշխատութեամբ, մաքուր եւ ազնիւ կենցաղավարութեամբ, բարեպաշտութեամբ եւ կատարմամբ քաղաքացիական պարտաւորութեանցդ: Մի անջատեսցեն զՁեզ տարածութիւնք հեռաւորք, ծովք եւ ովկիանոսք ի սիրոյ բնիկ ժողովրդեան, բնակելոյ ի պատմական հայրենիս եւ ի Մայր Աթոռոյ, որ սիրտ կենդանութեան եղեալ է հոգեւոր կենաց համայն ազգի, վկայ եւ կրթող յաւիտենական պատմական անցից, ուրախութեան եւ վշտի, յաջողութեան եւ տառապանաց ժողովրդեան մերոյ դարուց ի դարս:

Որդեակք իմ հոգեւորք, հաստուածեալք յօտար սահմանս հեռաւոր ազգաց եւ պետութեանց զկնի յորդորական բանից եւ օրհնութեան ունիմք ասել Ձեզ եւ բան ինչ մխիթարական եւ աւետաւոր, զի թէպէտ ըստ բերման դժբաղդ հանգամանաց աւերեցաւ երկիր մեր եւ փարազրեցաւ կենդանի մնացեալ ժողովուրդն ի սփիւռս աշխարհի, որոց մասն եմ եւ բազումք ի Ձէնջ, սակայն ողորմութեամբն Աստուծոյ շնորհեցաւ մեզ Արարատեան աշխարհին սահմանակից գաւառաւքն, որ օր ըստ օրէ ծաղկեալ բարգաւաճի ի շինարարութեան եւ ի

ձեռնարկութիւնս ի ձեռն
քաղաքակրթական - գիտական եւ ի տնտեսական ամենապեսակ ձեռնարկութիւնս ի ձեռն
բարեջան Կառավարութեան Խորհրդային Հայաստանի: Ժողովուրդ մեր ջան ի գործ եդեալ
զաւանդականն իւր աշխատասիրութիւն եւ զեռանդ, նորոգէ զաւերեալ հայրենիս իւր, բարե-
փոխելով զնա յերկիր պտղաբեր եւ բարեկեցիկ: Մինչ ի հաստատութիւն Խորհրդային Կա-
ռավարութեանն ի Հայաստան աշխարհի, յերեսաց աղքատութեան երկրին հազարք հա-
զարաց յազգէ մերմէ խնդրէին զգիւտ պատառ մի հացի յօտար քաղաքս Կովկասու, Ռու-
սաստանի եւ արտասահմանի, այժմ երկիր մեր ոչ միայն բաւարարէ զկարիս սննդեան եւ
կենաց բնիկ ժողովրդեանն, այլեւ հետզհետէ ընդունի ի ծոց իւր զցրուեալ որդիս յօտար
սահմանաց: Զայս յայտ առնեմք Ձեզ, որդեակք Մեր սիրելիք, յուրախութիւն եւ ի մխիթա-
րութիւն, յորդորելով զՁեզ սատարել բարոյապէս եւ նիւթապէս վերաշինութեան երկիրս,
զկրթական եւ զբարենպատակ ամենապեսակ հաստատութեանց ասեմ, զվերաշինութենէ
քաղաքաց եւ գիւղօրէից, զգործարանաց եւ զծաղկմանէ երկրագործութեան, զի Դուք ոստ
էք միոյ ծառոյն, արմատք եւ բուն կենդանութեան որոյ հաստատեալ կան ի պատմական
հայրենիս մեր՝ ի Խորհրդային Հայաստանի:

Շնորհք, սէր եւ խաղաղութիւն եղիցի ընդ Ձեզ, ամէն:

**ԽՈՐԷՆ Ա**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս յամի շնորհաց Փրկչին 1933 ի 1 յուլիսի
ըստ Տումարիս ՌՅՁԲ, ի Հայրապետութեան Մերում յԱ. ամի
յԱրարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, ի Վաղարշապատ